



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Արհաւորաբար Գ.

Ազգայնական.

Ռեզյուսի շնորհակալ.

3703

Կ. Պոլսի,
1863



891.995
U-44

5287

56 9

508

ՆՈՒԷՐ

Մ Ա Ն Կ Ա Ն Ց

ՈՂՋՈՅՆՔ

ՇՆՈՐՀԱՆՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

ԵՒ

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՆԵՐՍԷՍ Ս. ՄԷՋՊՈՒՐԵԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ


ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻՒՐԲՃԵԱՆ

Թուրքիա, Ֆիհրաբեզ

— 1863 —



891.995
U-44

2004

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR
BUREAU OF LAND MANAGEMENT
WASHINGTON, D.C. 20250

OFFICE OF THE ASSISTANT SECRETARY
FOR LAND AND WATER MANAGEMENT
AND POLICY DEVELOPMENT

1000 G STREET, N.W.
WASHINGTON, D.C. 20004

TELEPHONE (202) 733-6000
FACSIMILE (202) 733-6000

WWW.BLM.GOV



ԱՐՉԱՆ
ՅԻՇԱՏԱԿԻ
ԱՆՄԱԿ
ՍԻՐՈՅ



ԱՌ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՀԱՐԱՋԱՏՆ ԻՄ


ՊԵՏՐՈՍԻԿ

Գողտրի՛կ հրեշտակ, դու, որ թողեր
Հարազատաց խմբեակ մ'յերկիր,
Ծնողաց գրկէն զետ գեղ տատրակ
Թըռար յՈւլիմպ ծաղկահասակ,
Քեզ անթառամ պսակ փառաց՝
Հիւսեց պճնեց Գրախտն երջանկաց,
Քու անմահ սէրդ, ազնի՛ւ Պետրէ,
Որ սիրտն եղբարց միշտ բաբախէ,
Մինչ չ'է ծածկած իս սև շիրմակ,
Սրտիս հատուած քեզ յիշատակ
Տամ հայ մանկտւոյն մեր քաջուղիդ,
Փոքր այս նո՛ւիէր երգող տաւիդ:

ԱՌ

ՄԱՆԿՏԻՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆ



Մանկճանք յոյս սիրուն

Տարաբուն Հայուն.

Ահա՛ ձեզ հրաւեր

Սիրոյ՛ այս Նուեր.

Այս ձեր պարզ սրտին

Թարգման կաթոզին.

Եւ այս որդիական

Լեզուի մ'երգ արժան.


Զոր ձեզ ընծայե

Հայկազուն պարման

Ներսես Մեզպուրեան:



ՆԱԽԵՐԳԱՆՔ



ԱՂՕԹՔ ՄԱՆԿԱՆ ԿԱՂԱՆԴԻ ԱԻՈՒՐ

Տէր, Նոր Տարւոյս այս առաւօտ,
Նախերգանօք դամ Քեզի մօտ.
Բայց մանկական սրտիս թարգման,
Թոթով լեզուակ մ'ուենիմ միայն :
Դու, որ իմ հօրս սուրբ Աստուածն ես,
Եւ կ'ըսեն՝ դիս սրտանց սիրեա,
Լեզու ելած օրս առաջին,
Ծնօղքս ինձի քեզ ճանչցուցին :

Մօրս գրկին մէջ մինչ դեռահաս ,
Քեզ կարդացի նախ՝ Տէր ԱՍՏՈՒԱԾ .
Դէմքս 'ի ծիծաղ , լեզուիս երգա .
Երկրորդ շարն էր ԾՆՕՂԲ ԵՒ ԱԶԳ :

Մի մեղադրեր , եթէ կ'ապշիմ ,
Երբ կը լսեմ՝ երկիր ու երկին՝
Լոկ ԵՂԻՑԻ բառով մ'ով Տէր ,
Ստեղծեր ես , եւ դու զիմ սէր :

Երբոր արեւն ամեն առտու

Ծագի տեսքովն իր ահարկու ,
Մեծ սարսափ մը կ'զգամ սրտէս .
Բայց այն ալ դուն ստեղծեր ես :

Աղուոր լուսինն ու բիւր աստղեր ,
Որ կը փայլին պարզ գիշերներ ,
Ի՞նչպէս չապշիմ երբոր կ'ըսեն ,
Քեզի համար հազիւ կայծ մ'են :

Եւ սա տարին որ նորեցաւ ,

Կը փոխուի չորս եղանակաւ .

Չորսն ալ մէյմէկ չքնաղ թերթով ,

Բացուին գոցուին եւ խիստ շուտով :

Չմեռն ճիւղով նուրբ ու անաղօտ ,
Գարուն ծաղկով անուշահոտ ,
Ամառն անոյշ պտուղներով ,
Աշունն հարուստ ողկոյզներով :
Երբ առտուանց իջնեմ պարտէզ ,
Կարծես խօսուն մարդերու պէս՝
Գաշտ , լեռ , հով իտ աչքիս առջեւ՝
Երկնից շնորհեն օրհներդ բարեւ :
Առուակ՝ կարկաջ եւ զեփիւռ՝ սիւք ,
Մեղմ դայլայլիկ՝ սիրուն թռչունք ,
Կագան՝ կագ , ձագ՝ ճիւղ , մէ՛ գառներ ,
Չորն՝ արձագանք , երգ տան քեզ Տէր :
Հեզասաղարթ տերեւն ոստով ,
Ծաղկին հոտով , պտղին համով
Քու մեծութեանդ վկայ , Աստուած ,
Ինչպէս մանկանս շունչն անխառնուած :
Ժամանակին համար կ'ըսեն ,
Թէ քեզի կէտ մ'անգամ չարժեն
Հազար ու բիւր օրն ու տարին ,
Անցեալն , ներկայն ու ապանին :

Անցեալն երթայ ծանր բեռնով,
Ներկայն մեզի հով մըն է զով .
Ապագայն ալ շատ յոյս կուտայ,
Եթէ սիրտըս քեզ ուխտ ըլլայ :

Արարածոց մէջ ամենէն
Քու սիրելիդ Մարդն է կըսեն .
Որ մտքովն ու խօսուեն լեզուով,
Գերազանց է ամենուն քով :

Մարդ մէկ տեսակ, բայց Ազգեր շատ՝
Հայրս ըսաւ թէ Ղեզուընին զատ .

Որոնք գառանց հօտերու պէս՝
Փարախներու մէջ բաժներ ես :
Ո՛հ, իմ ազգիս անունն է Հայ,
Ես ալ հայ եմ լեզուս ալ հայ,
Եւ մեր փարախն է ՀԱՅԱՍՏԱՆ,
Գիտես Աստուած, կը սիրեմ զայն :

Բերանս դեռ ծիծ դնէր մայրիկ,
Սկսայ երգել հայ, հայրենիք .
Որուն համար կը ծնանինք մենք,
Եւ հայ լեզուով քեզ կը պաշտենք :

Նոր ասրևոյս , Տէր արդարադատ ,

Արդեօք ինչներ ունիս պատրաստ՝

Նուէր մատաղ հայ մանուկիս ,

Միանգամայն սիրուն ազգիս :

Քեզի համար մայրս ըսաւ , Տէր ,

Կ'օրհնես սիրես բարի մարդեր .

Արքայութիւն՝ վարձ բարութեան ,

Եւ դըժոխքի կոծ՝ չարութեան :

Կ'ուխտեմ քեզի՝ ամեն մարդու

Բարի ուզել ըսալ հըլու .

Օրուան լուսոյն հետ նորոգել

Մանկութեան տրիւի սրտիս նոյնի :

Քեզ , ո՛վ Յիսուս , կը սիրեմ քեզ ,

Քեզ , որ մանկտին շատ կը սիրես .

Ո՛չ հին եւ ո՛չ ալ նոր տարին

Զօրեն տալ սէրս բերան հովին :

Խաչիդ առաջ երկրպագու ,

Բաղկատարած տամ ալէլու .

Այն խաչն , որ մեր մեղքին փրկանք ,

Հոն կըրեցիր շատ նախատանք :

Վերջին մաղթանքս են քեզ, Աստուած,
Երջանիկ կեանք՝ իմ վեհ ծնօղաց .
Որ միշտ ինձի տանին խնամ
Բարոյական եւ նիւթական :
Փառք պատրաստէ եւ անոնց, Տէր,
Անոնց, որ սիրտս մաքրեն թել թել .
Տգէտ մտացս ալ խաւարին՝
Տան գիտութիւն, լոյս կենսածին :
Տուր արեւ, Տէր, սիրուն ազգիս,
Քաղցր արշալոյս՝ Հայաստանիս .
Խլէ մրկէ այն որոմներ,
Որ մեր սիրոյ արտն են բուսեր :
Տուր Տէր, մանկանս շատ նոր ՏԱՐԻ,
Որ քեզ օրհնեմ սրտով բարի .
Ծլիմ ծաղկիմ վարդի նման,
Տալ անուշիկ հոտ Հայութեան :



ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ՈՂՋՈՅՆՔ

ՇՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

Ա. ՇԱՐ

ՄԱՆԿԻԿՆ ԱՌ ԾԵՕՂՄՆ

Ա.

Սրտիկս ուրախ ,

Գէմքս 'ի ծիծաղ ,

Զեստ թռչնիկ մ'ի դաշտ ,

Ունիմ երգեր շատ .

Բայց լեզուիս լարեր

Դեռ անվարժ տաւղել :

Գէթ ՏԱՐԻՍ ՆՈՐ

ԶԵՁ ՇՆՈՐՀԱԻՈՐ

Կրնամ ըսել ,

Եւ այս իմ սէր ,

Սրտիս Նուէր :

Բ.

Սրտիկս 'ի սէր յուզուած , ծնօղք իմ ,
Ուրախութեանս թարգման չունիմ .
Եւ նոր Տարւոյս առաջին օր ,
Ես գեղգեղանք մ'ունիմ աղուոր ,
ԿԸ ՍԻՐԵՄ ՁԵՁ ՍՐՏՈՎՍ ԲՈԼՈՐ :

Գ.

Եթէ չըլլար լեզուս թոթով ,
Գիտէք ծնօղք իմ , ինչ երգերով
Կ'ուզէի ես գովել
Ձեր խնամքն ու քաղցրիկ սէր ,
Որ ամեն օրուան
Արեւին նման
Կը փայլի վրաս :
Գէթ հայրս ու մայրս լսէր այսօր
Մաղթանքն որդւոյն , ՆՈՐ ԼՈՅՍ , ՅՈՅՍ ՆՈՐ :



Բ. ՇԱՐ

ՈՐԳԻՔ ԱՌ ԾՆՅՈՂՍԵ

Ա.


Ինչպէս բնութեան երգեցիկներ՝
 Գարնան պայծառ առաւօտներ՝
 Որն 'ի հովիտ , որն 'ի դաշտակ՝
 Չքնաղ ծաղկանց կ'ըլլան երգակ :

1926

Ճւ անդ , մենք ալ եղբայր ու քոյր
 Արփւոյն պերճ օրս արշաւասոյր
 Մինչ կը վայլենք համաժողով ,
 Գեղգեղենք ձեզ շնորհուն սրտով
 ՏԱՐԻՍ ԲԱՐՈՎ :

Բ.

Քոյր 'ւ եղբայր ձեռք ձեռքի տուած ,
 Միրարչարժ պար մ'հարազատաց ,
 Չեզ՝ հայր մայրիկ , ձեռնատարած
 ԲԱՐԻ ԿԱՂԱՆԻ շնորհաւորենք ,
 Բայց դարձեալ սէր ձեզմէ խնդրենք :



Գ.

Շուենչ մ'որ շնչենք այսօր՝ հայրիկ ,
Այն իսկ ձերն է ազնիւ մայրիկ .
Որդւոց շուրթն ու բիբն երկթերթի՝
Ծնօղաց փառքին համար շարժի .
Մինչ մեր լուսոյն արեւմուտքին՝
Պարտք մաղթել ձեզ կեանք զուարթագին :
Ինչպէս որ Նոր Առաւօտուս ,
Ուր ձեր գրկին մէջ կ'առնունք լոյս ,
Ուրախ ոգւով կայտունք 'ի խանդ ,
Ողջոյն տալու՝ ՍԻՐՈՅ ԿԱՂԱՆԴ :
Որով եղբարքս աւետաբեր՝
Վայլենք ծնօղաց գորովն ու սէր ,
Ըլլալ օր մը կիրթ բարեպաշտ ,
Ծգտել ձեզի տարիներ շատ .
Ըլլալ օր մը ճշմարիտ Հայ ,
Եւ չը բերել մեր գլխին վայ .
Ըլլալ սիրող միշտ գիտութեան ,
Որ ճիշդ պարտիք որդիական :

Գ. ՇԱՐ

ՈՐՍՏԵՐԵ ԱՌ ՀԱՅԵՐԵ

Ա.

Արեւիկ ծագի, բայց գիշեր ունի .

Կը ծաղկի վարդուկ, բայց կեանքն է փափուկ :

Լոկ տղիդ սէրն՝ հայր խանդակաթ ,

Չ'ունի աշնան տերեւաթափ .

Որով վառուած 'ի գլուխ Տարւոյս ,

Գայ հրաւէր տալ երգով ԼՈՅՍ, ՅՈՅՍ :

Բ.

Միտքս խակ 'ւանւարժ, լեզուով դեռաւարժ՝

Քաղցր հայրիկս ինչպէս՝ այս օրն ոգեմ քեզ .

Եւ սիրտս երախտեօք՝ տամ 'ինուէր բարւոք՝

Շատ են իղձս ու ջերմ՝ առ հայրն իմ վսեմ ,

Որուն շուքին տակ՝ կ'ապրիմ շնորհունակ :

Գէթ Նոր Տարւոյս՝

Երգէ լեզուս ,

ԿԵՅՅԵՍ ՀԱՅՐ

ՅԱՄՍ ՅԱՄԱՅՐ :

Դ. ՇԱՐ

ՔՍՏԲԻԿԵՆ ԱՌ ՀԱՅՐԵՆ

Ա.

Հայրիկ , աղջիկդ ունի տաղանդ ,
Որ բարեւէ քեզի կաղանդ ,
Բայց մատաղ լեզուակս արձակուած օրէն՝
Սովրեցայ տաղ մ'ես , ՀԱՅՐՍ ՍԻՐՈՎ, ՅԱՐԳԵՄ :

Բ.

Տարւոյս առաջին
Բարեզուարճ օրին
Հայր ընդունէ բազկացդ մէջ ,
Ուր գամ տաւղել , սն , սիրոյդ էջ .
Ահա պատկեր զգացմանցս անոյշ ,
Ժպտախառն այտք , աչկունք մեղոյշ :
Օն , գիրկ ընդխառն ան զիմ Ողջոյն ,
Եւ երախտիքս իմ աճեցուն ,
Զոր ձեր գրկին մէջ ստացայ .
Այս քեզ հայրիկ , աղջկանդ ընծայ :

Ե. ՇԱՐ

ՄԱՆԿԻԿՆ ԱՌ ՄԱՅԲՆ

Ա.

Մայր , ես սոխակն եմ սիրարուն ,

Որ նախերգէ ելքն արեւուն .

Եւ զեփիւռին խառնած դաշներ ,

Արձագանք տայ մինչ տանց դռներ :

Ո՛վ չ'ախորժիր արդեօք լսել՝

Սիրտ շարժող քաղցր եղանակներ :

Մայրիկ , մանկիկս ուրախ զուարթ՝

Ի՞նչպէս չ'երգեմ այսօր կաղանդ ,

Որ բերէ մեզ կենաց բարեւ ,

Հապա մաղթեմ ՇԱՏ ՊԵՐՃ ԱՐԵԻ :

Բ.

Նոր Տարւոյս համար՝ ես որդեակդ ո՛վ մայր ,

Շատ խօսք ժողվեցի լեզուակիս վրայ ,

Վեր վար վաղեցի՝ քեզ բերել ընծայ .

Բայց ըմբռնումս որ խիստ տկար ,

Հաղիւ պահեց սա երեք բառ ,

ՄԱՅՐ , ՍԻՐԵՄ ՔԵՁ . դու իս սիրես , — այո՛ :

Զ. ՇԱՐ

ՔՈՒՍՏՅԵՒ ԱՌ ՄԱՅԲԵՒ

Ա.

Աղջիկդ ահա, մայր սիրատու,
Փուլթայ երգել լեզուով գնչու,
Շնորհաւոր օր եւ ՏԱՐԻ ՆՈՐ:

Ընդունեցէք սիրելի մայր,
Ուրախ ոգւոյս ձօնիկն արդար,
Բարեացապարտ սրտիս՝ փառք մօր:

Բ.

Բաց գորովոյ գիրկդ ազնիւ մայր,
Ուր գայ դատրիկդ արշաւասոյր,
Տալ կաթնատու ձեռքիդ համբոյր:
Լսէ մայրիկ աղաւնւոյդ ձայն,
Շնորհաց սրտիս նուէրն յայս ժամ՝
ԲԱՐԻՈՔ ԿԱՂԱՆԴ, ԿԵԱՆՔ ԱՆԹԱՌԱՄ:

Հանգչիմ 'ի խինդ սիրոյդ 'ի բոյն,
Ուր ստացայ այս Հայ լեզուն,
Օրհներգել քեզ տարին 'ի բուն:

Է. ՇԱՐ

ԵՂԲԱՅԲ ԱՌ ԵՂԲԱՅԲ

Ա.

Հորիզոնէն վեր ծլծլաց արշալոյս ,
Պերճ էր երեւոյթն եւ նոր լոյսն ու յոյս .
Հնչեց հրաւիրական արթնութեան զանգակ,
Տեսայ որ խայտան եղբարք քաղցրերգակ .

Խնդում գէմքով համբոյր փոխեն ,

Եւ ներդաշնակ Նոր Օր երգեն :

Դուրս ել արեւիկ մեղոյշ աչիկով ,
Վառվռուն մանկան պէս խնծղար պարելով .
Շնչեց սէրուսիրտ գարնայնի ծոցէն՝
Բերելով մեզի յոյս քաղցր օրերէն :

Փութացի եւ ես եղբայր սիրելի՝

Ողջոյն տալու քեզ՝ ՇՆՈՐՀԱԻՈՐ ՏԱՐԻ :

Բ.

Ի ծով գիմեն գետն ու վըտակ ,

Կայլակ , կաթիլք կազմեն հոսանք .

Եւ յՈվկիան ծով ժամանակին՝
Միշտ խառնի ժամն, օրն ու տարին՝
Դեռ պահ մ'առաջ մեծ հոսանք մ'ալ՝
Անցեալին մէջ վազեց դարձեալ՝
Բայց չը թողուց Տէրն յուսահատ,
Տալով մեզ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԿԱՂԱՅՐ:
Տալով ինծի եւ քեզ, եղբայր,
Ողջմամբ շնորհել համբոյր մրն ալ՝
Զի ուր չը կայ համբոյր եղբօր,
Հոն թշուառ է մարդն ամեն օր՝
Ո՛հ, կը սիրեմ եղբայրս, սիրտս է,
Սակայն հեռի հայրենիքէ՝
Հայրենիքէ այն եղբայր,
Որ անհամբոյր ապրի թշուառ՝
Կ'անցնին օրեր՝ բայց չ'ունին մեր
Հայ աշխարհին յիշատակներ,
Այն դարերէն չ'ունինք բաժին,
Որ փառք կրեցին օտար ազգին՝
Ոչ անցեալն էր Հայոց արփին,
Եւ ոչ Տարւոյս օրն առաջին՝

Եւ սոսկ յոյս կայ ապագայէն ,
Թէ որ եղբարք իրար սիրեն :
Եկուր ուրեմն ազնիւ եղբայր ,
Օ՛ն , գիրկ ընդ խառն պաշտկ տուր , ան :
Սէր նուէր տանք եւ Նոր Տարւոյս ,
Ուրկէ ծագի հէք հայուն լոյս :

Ը. ՇԱՐ

ՔՈՅՔ ԱՌ ՔՈՅՔ

Ա.

Արեւելքին 'ւարեւմուտքին՝
Քեզ առնթեր գտնեմք թոյր իմ .
Քեզ հարազատ սրտիս ընկեր ,
Դու իմ արիւնս եւ իսկ իմ սէր :
Ահա դարձեալ 'ի գլուխ տարւոյս ,
Քրոջըդ քով , որ սիրայոյդ
Եւ զուարթերես գայ 'ի համբոյր ,
Քեզ բարեւել նոր թե , ու՛ր քոյր :

Բ.

Ի՞նչ են երկու հարազատ քոյր ,
Անմեղական զոյգ մ'ազաւնեակ ,
Պերճ գիշերուան աստղ լուսաթոյր ,
Ծնողաց սիրոյն վառ արբանեակ :
Երջանկութեան նուէր օրն այն ,
Ուր քոյրեր , սէ , սիրեն իրար .
Խաղաղութեան այն օթեւան ,
Ուր միաբան են քոյր 'ւ եղբայր :
Երջանիկ չեմ եւ ես այսօր ,
Ուր թեւ 'ի թեւ քեզ կ'աւետեմ ,
ՍԻՐՈՅ ԿԱՂԱՆԻ ԵՆ ՏԱՐԻ ՆՈՐ .
Մաղթանքս՝ արեւ քեզ աննսեմ :

Գ.

Ժամանակն արդ՝ ձայն տայ քոյր ,
Նորոգել մեր սուրբ ուխտեր .
Եկո՛ւր հապա , 'ի համբոյր
Երգենք Տարիս շնորհաբեր ,
ՆՈՐ ՍԷՐ , ՆՈՐ ՕՐ ԿԵՆՍԱԲԵՐ :

Թ. ՇԱՐ

ԵՂԲԱՅԵ ԵՌ ՔՈՅԵ

ԿԱՄ

ՔՈՅԵ ԵՌ ԵՂԲԱՅԵ

Ա.

Կեանք է ինձ, որ սրտով

Կ'անուանեմ քեզ Եղբայր .

Քաղցր է ինձ եւ այսօր

Ողջուներէ ՏԱՐԻՍ ՆՈՐ :

Արժանի ենք սիրոյ ,

Քոյր 'Լեղբայր միմեանց յոյս .

Եղբայրս է սրտիս թել ,

Ո՞վ կրնայ զայն կտրել :

Զեռքդ օն տո՛ւր եղբայր իմ ,

Այս սիրոյդ քո նշան .

Օ՛ն , ըսէ հարազատ ,

Կը սիրեմ քոյրս 'ի խանդ .

Ապրի՛ իմ Եղբայր ,

Բարութեամբ հազար .

Բ.

Որդին հօր մօր, եղբայրն եղբօր՝
Երգէ այսօր՝ ԱՌՅՍ ՇՆՈՐՀԱԻՈՐ ։
Ահա եղբայրդ ալ քոյր սիրուն,
Կը փութայ տալ քեզ նոյն ողջոյն ։
Ողջոյն մ'որուն զուարճ ժամեր՝
Մեզ խոստանան փառաց դարեր,
Եթէ ուխտենք ո՛վ հարազատ,
Դարձեալ մեր սէրն ընել հաստատ ։
Այն սէրն անոյշ, որ քանի՛ դար՝
Հայ սրտին մէջ կտրեր է սառ ։
Հայն է այսօր թափառական,
Դարձեալ չ'ունի սէր ազգութեան ։
Հայն, որ երբեմն էր փառաւոր,
Ստրուկ գերի մըն է այսօր ։
Այս այն հայն է, որ ինք գիտէ ։
Առանց սիրոյ վար գլորեր է ։
Արդ՝ քոյր, այս չ'է Հայուն տարին ։
Տուր ձեռքդ ողբանք, ձայն տանք էին,
Սէր տայ հայոց եւ մեզ, քոյր իմ ։

Ժ. ՇԱՐ

ԲԱՐԵԿԱՄ ԱՌ ԲԱՐԵԿԱՄ

Ա.

Կաղանդն եկաւ բարեկամ,
Եկուր համբոյր մ'առ այտէս,
Ցնծութեան ձայն մ'ալ սրտէս,
Ցաւն ու կսկիծ տես ինչպէս՝
Է՛հ, խոյս կուտան մերկանդամ։
Սէր իմ, սիրտ իմ անտըխեղծ,
Այդ ինչ ժպիտ զուարթադէմ,
Հայ օրտի մը ճիշդ պատկեր,
Մեղըր կաթէ այդ շրթնէն,
Այն ինչ երգէ սէրս անկեղծ։
Նայէ՛ աւուրս առաւօտ,
Արշալուսով շողշողուն՝
Դուռ կը բանայ մեր սրտին •
Բեռել հոն սէր, — միութիւն,
Ուր հայ փառացն է արօտ։

Իհլսել կ'ուզէ դափնի պսակ,
Թէ նոր տարւոյս հետ բարով
Իրարի տանք սէրն, — օրէնք.
Իհլսել մեր սիրտն օրէնքով
Նշան հայուն այս միակ,
Հարազատիկ, ձեռքդ օն տուր,
Առանջ երթանք, օրն է ուշ.
Յանուն ազգիս հայութեան՝
Ուխտենք միմեանց սէր անոյշ.
Յերբ սուրբ ձայնին մնանք խուլ:

Բ.

Սէրն անխաբէ կ'ըսեն ընկեր,
Եւ օր մ'երբէք չ'է մեղանչեր.
Որուն նեկտարն այն ինչ ժամ էր,
Սիրոյ դրդամբ տուիր նուէր,
Նոյն բաժակով ո՛վ բարեկամ,
Քեզ նոր ՏԱՐԻՈՅ ՈՂՋՈՅՆ կուտամ.
Դարձեալ սիրոյ ձեռք սիրելիս,
Յօգուտ մեզ եւ պանդուխտ ազգիս:

Դ.

Արդ , նոր ՏԱՐԻ մ'ալ ողջանդամ՝

Կը բարեւեմ քեզ , բարեկամ :

Բայց ինչ է օրն այս կարճնովին ,

Ձուարթ կէտ մը դիւրեղծ կեանքին .

Որուն չքնաղ ծագմանն առաջ՝

Եղբարք կուտան միութեան աջ :

Երջանիկ է միշտ բարեկամ՝

Թշուառութեան կեդրոնն անդամ .

Ուր չորսն ու հինգ մէկ սիրտ մէկ անձ ,

Օրհներն արեւն հայ հայրենեաց .

Շղթաներու ներքեւն անդամ՝

ԿԵԱՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ վերջին շունչ տան :

Մէկտեղ հայոց դարերուն

Չայն տան առնուլ արթնութիւն .

Մէկտեղ կ'երգեն ու կուլան ,

Անէ՛ծք տալով վատութեան .

Որ հայուն սիրտն արեամբ ներկեց ,

Բայց զայն մաքրէ մեր սէրն անկեղծ :

Դ.

Ի՞նչ է աշխարհս զարդարուն ,

— Բարեկամաց միութիւն .

Ի՞նչ գին ունի արդար սիրտ

Բարեկամին ճշմարիտ .

Անզօր է քընար ,

Անոնց փառք կարդալ .

Ո՛հ , բարեկամ իմ , — սիրտ իմ ,

Անոյշ խունկ մ'է այն ոգին ,

Որուն բուրման հետ յերկին

Ծխէ մաղթանքն եւ լեզուին .

Երկու բարեկամ ,

Ծաղիկ անթառամ .

Դարձիր արդ յիս բարեկամ ,

Մեր սիրտք դարձեալ միանան .

Ձեռք տանք որ Նոր Տարւոյս հետ

Մեր սէրն ըլլայ համահետ .

Այսպէս շատ կաղանդ

Ո՛հ , ապրինք 'ի խանդ .

ԺԱ. ՇԱՐ

ԱԶԱԿԵՐՏ ԱՌ ԳԱՍՏԻ ԵՐԱՄ

Ա.

Ո՞վ այսօր սրտիս ընդունիմ թարգման .
 Լեզուս , որ անվարժ հնչել երկու ձան ,
 Գրիչս , որ դեռ կաղ զեստ յորհաս մանկիկ ,
 Անկարող գծել այն շնորհքն անուշիկ ,
 Որ օրուան լուսոյն հետ կ'առնում քեզմէ .
 Ի՞նչ ունիմ փոխան , ըսել՝ ընդունէ ,
 Եւ որչափ անցնի ժամանակն անդարձ ,
 Ինչպէս որ այսօր քայլ մ'ալ սրբընթաց
 Կը փոխէ արիւոյն շրջաններուն քով ,
 Այնչափ ծանրանամ էս սուրբ պարտ քերով .
 Ընդունէ , ո՞վ դու , որ աշխարհի մէջ
 Կը հովուես մանկտին գառանց հօտին պէս .
 Ընդունէ ձայնիկս , որ խօսի սրտէս ,
 Եւ մինչ 'ի շիրիմ պարտի օրհնել քեզ .
 Ընդունէ երգս իմ ՆՈՐ ՏԱՐԻ , ՆՈՐ ՕՐ .
 Չ'անրժեր որ մազթեմ քեզ կեանք անպղտոր

Բ.

Երբոր ծաղկի գարնան պարտէզ՝
Ելնէ 'ի սար վեհ պուետէս ,
Իւր վրձինով գեղեցկագիր՝
Գրել բնութիան չքնաղ տեսիլ ,
Բայց ո՛ւր ինծի համար այն ձեռք ,
Շարագրել տալ ձեզ փառաց երգ .
Կրնամ գովել այն արեւ վառ ,
Որ վառեց սիրտս փառաց համար ,
Դուք՝ որ մանկտուռն մտաց լոյսն էք ,
Եւ մարդկութեան քաղցր յոյսն ու ղէկ ,
Քաջ երտժիշտ Մուսայն անգամ՝
Անզօր շարել ձեզ երգ արժան .
Դուք՝ հայրենի գերեզմանէն
Մեզի պատմէք անցեալն ամեն .
Ձեր գրիչն օրէնք հանուր ազգաց ,
Եւ գաւազան թագաւորաց ,
Ձեր ձայնն անգութն 'ի խիղճ շարժէ ,
Եւ զօրականն յառաջ մղէ ,
Արդ , ինչ կ'արժէ տըղի մը ձայն ,

Որ իւր թլուատ լեզուով միայն՝
Բարեւէ նոր ՏԱՐԻՈՅ ԺԱՄԵՐ ,
Ուր պատրանատ են ձեզ շատ փառքեր ,
Լսէ այս մեղմ ձայնիկն ո՛վ Տէր ,
Աշակերտիդ ուսումնասէր ,
Որ դիմէ ձեզ ուրախ ոգւով ,
Եւ եր ախտեաց սրտի նուէրով :

Գ.

Այն օրն երբ դուք՝ ո՛վ ուսուցիչ ,
Տուիք ձեռքըս թուղթ ու գլրիչ .
Այն օրն երբ դուք մատաղ լեզուիս
Հնչել տուիք ուխտեր սրտիս ,
Աստուած եւ Սէր քաղցր Հայրենիք ,
Բարոյական դասուց եմ գիրք՝
Երբ կարդացի ու առի լոյս ,
Երջանկութեանս կ'երեւէր յոյս ,
Այն օրն ձեզի , ո՛վ խնամածուս ,
Նուիրեցի սիրտս ու լեզուս .
Չեզմէ ստացած գրչաւս հրգօր՝
Դրուագել ձեզ տարի եւ օր :

Արդ փանք , հրճուանք , որ գամ սիրով ,
Իմ վարժ գրչիս տողիկներով
Շնորհաւորել ձեզի ԿԱՂԱՆԴ ,
Ի նուէր սրտիս բարեացապարտ :
Ընդունեցէք զերթ խունկ անոյշ ,
Այս աշկերտիդ ձօնիկ քնքուշ :

ԺԲ. ՇԱՐ

ԱԸԱԿԵՔՏՈՒՆԵՆ

ԱՔ ԳԱՍՏԻԱՔԱԿԵՆ

Ա.

Ես թիթեռնիկն եմ այն թռթռուն ,
Որ հովահար թեւով սիրուն՝
Կը դառնայ թափօր
Գեղ վարդին բոլոր :
Որուն կարմիր թերթեր քնքուշ՝
Բուրեն իրեն հոտիկ մ'անոյշ ,
Թռթռայ թիթեռնիկ ,
Երգերն են լըռիկ ,
Ես թիթեռնիկն եմ այն թռթռուն ,
Եւ մանկական թեւերս յողջոյն ,

Գամ թռթռայ ձեր ծաղկին շրջան ,

Ուր կան բուրմունք իմաստութեան :

Հոն թռթռայ աղջիկ ,

Երգերն չ'են լրուիկ •

Ինչպէս որ այսօր՝

ՏԱՐԻ ՇՆՈՐՀԱԻՈՐ :

Բ.

Ծնայ ծնողաց սրտին քով ,

Ուր կընդունիմ միշտ գորով •

Երկինք որ իս յանձնած էր

Անոնց խնամքին որդեսէր ,

Երբոր շրթունքս երթերթի

Թողին լեզուս որ խօսի ,

Չեռքէս բռնած իմս հայրիկ ,

Յանձնեց խնամոցդ երջանիկ :

Այս քեզ , ըսաւ , ճանչցիր արդ ,

Կ'ուսուցնէ , թէ , ինչ է մարդ •

Ի՛նչ է երկիրս ուր երկինք՝

Զոր կը տեսնես ո՛վ աղջիկ :

Եւ դու ո՛վ այր իմաստուն .

Կ'ուսողներն ինձ օրն 'ի բուն ,

Հաւատք , յոյս , սէր , գործ բարի ,

Միշտ չը տալ սիրտըս չարի :

Լոկ ուսմունքներն են կ'ըսես ,

Առաքինի կ'ընեն մեզ .

Ուսմունքն է զարդ աղջկանց ,

Ուսմունքն է սանց չարութեանց .

Այո՛ , ուսմունք լոկ դարման՝

Մտաց ախտին բանական :

Վատ է այն մարդն 'ւամբարիշտ ,

Որ չտայ ձեզ յարդ ճշմարիտ :

Հայ օրիորդն երջանիկ ,

Որուն բաշխէք ուսմանց գիրք .

Արդ , այսօր ինչ քեզ նուէր .

Զի քիչ ոսկի արձաններ :

Սիրտ մը , զոր միշտ կը մաքրես ,

Լեզու մը , զոր նորոգես ,

Ողջունիւ ՚որ ՏԱՐԻՈՅՍ , Տէր ,

Անոնք ըլլան քեզ նուէր ,

ԺԳ. ՇԱՐ

ՔԱՍՏԻԱՐԱԿՆ

ԱՌ (ԱԶԱԿԵՐՏ)

Ա.

Հրճուէ մանկիկ դու սիրուն ,

Զի նորէ սէրդ եւ օրս նոր .

Երգէ այս օրն դէմ արփւոյն ,

Որ տայ քեզ լոյս փառաւոր :

Եղբարց միաբան , ըսէ հրճուածայն ,

Քեզգեղեմ 'ի խաղ , նոր՝ ՏԱՐԻՍ ԽԱՂԱՂ .

Գործոյ ժամանակ :

Բ.

Քաղցր զգացմանց դէմքըդ թարգման ,

Ճշգրիտ պատկեր ուրախութեան .

Որով արդ զուարթ դիմես ինձի ,

Շնորհաւորել նոր օր , ՏԱՐԻ .

Նոյն եւ՛ես քեզ աշկերտ խոհեմ .

Բայց բարութեանդ օգնել մաղթեմ .

Զոր թէ շահիս աշխատութեամբ ,

Կ'երջանկանաս իմաստութեամբ :

Ք.

Ծննդեան օրէդ ճամբայ մ'է կ'անցնիս,
 Մինչ այսօր յայս կէտ, Մինչեւ տեղդ հասնիս,
 Երբ լեզու ելար, Նայէ որ քարին
 Խօսիլ սկսար, Ոտքերդ չ'զարնուին:
 Քանի հեղ ըսիր, Քրտանց կաթիլներ,
 Հինցաւ աս տարին, Երբէք մի խնայեր.
 Նոր Տարին. եկաւ Աշխատութիւն կեանք,
 — Այո՛, գայ բարեալ: Ծուլութիւնտան ջանք,
 Նորոգի տարին, Երբոր չես վատներ,
 Նոր սէր գայ սրտին. Մանկութեանդ օրեր,
 Ահա մէկ ՏՄՐԻ Կ'ըլլաս երջանիկ,
 Մ'ԱԼ ՆՈՐՈՔ քեզի: Թէ հոս թէ երկինք,
 Բայց շատ չը տեւեր, Քանի քանիներ.
 Աս Երբ լմնցեր Վախով են անցեր.
 Ճիշդ նոյնպէս կ'ըսես, Չ'ընտրելով ընկեր,
 Կ'անցնի հովի պէս: Արթուն ջանասէր,
 Դու թէ հիննալուն, Կունակը բարձին
 Եւ թէ նորելուն, Կռթնցնող որդին,
 Չ'ըլլայ քեզ խաբես. Ետքէն ալ քարի
 Միշտ ԵԱՆԻՐ ԶԲԵԶ: Կը զարնէ կ'ըսուի.

Հիմայ կ'աշխատախոս, վերջապէս ո՛վ Հայ .
— Ետքը կը հանգչիս : Չը գայ գլխուդ վայ .
Միտքըդ մշակես, Մնալով տգէտ ,
Պտուղ կը քաղես . Ապրելով ումպէտ :
Հիմայ հնազանդ ես, Նոր տարուէ տարի ,
Կը հնազանդեցնես : Քու յոյսերդ բարի ,
Մինչդեռ մանուկ ես , Զանա նորոգես ,
Լեզուիդ չափ դնես . Ու չը հինցնես :
Ապրէ սուրբ սրտով , Տարւոյս առաջին
Հաւատով Յուսով . Օրէն նորոգուին
Հեզուժիւն պանծայ Զանքերդ մանկական ,
Միշտ դէմքիդ վրայ : Ոգւով Հայուժեան :
Հնազանդ ծընօղաց , Դեռ աս հասակիս ,
Է եւ Օրինաց Մաղժեմ պսակուիս
Սէրնախ առ Աստուած . Առաքինուժեամբ ,
Ազգդ չը մոռնաս : Եւ իմաստուժեամբ :



ԺԴ. ՇԱՐ
ԱՌ. ԲԱՐԵՐԱՐՍ

Ա.

Ձեր անձնանուէր որդին , ո՛վ տէր ,
Ուրախ սրտով , լեզուով թոթով
Փռլթայ երգել ձեզ ՆՈՐ ԺԱՄԵՐ .
Ձի նոր տարւոյս հետ ալ շատ յոյս
Տայ ինձ երկինք , փառօք ապրիք :

Բ.

Ես այն ծաղիկն եմ գարնայնի ,
Ձոր պատէին եղինձ ու փուշ .
Ես այն թշուառն եմ յաշխարհի ,
Որոյ ծնունդ դառն ու կեանքն անոյշ :
Ես այն ծաղիկն եմ գարնայնի ,
Ուր ձեր խնամոց պերճ արեգակ
Ծագեցաւ , շուքն է պանծալի :
Արդ , չ'ամրժեր , Տէր , 'ի գլուխ տարւոյս ,
Ուր ձեր՝ բազկին տակ գայ ինձ լոյս ,
Ողջունելով ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԹՐ ,
Մաղթեմ ձեզի կեանք փառաւոր :


Գ.

Այն օրն , ուր ձեր սիրտ բարերար՝
Դժբաղդ որբիս եղաւ պաշտպան .
Այն օրն սրտիս թերթին վրան
Կնքելով իմ պարտքերս արդար ,
Երախտապարտ որդեգրեցայ ,
Սոսկ խիղճըս քեզ ահա՛ վկայ :
Ամեն առտու քեզի համար
Չայնիկս յերկինս՝ կեանք կը մաղթեմ .
Ամեն օր Տէր , քեզի կ'ուխտեմ
Սիրտս ու լեզուս ընծայատար .
Ինչպէս բարեւ կուտայ այսօր ,
ԲԱՐԻ ԿԱՂԱՆԴ ԷՆ ՏԱՐԻ ՆՈՐ .

Գ.

Երախտապարտ սիրտ մը , ո՛վ տէր ,
Կրնայ մանուկ մը բացատրել .
Որուն դո՛ւք՝ հայր , մայր , բարերար ,
Ի՞նչ տայ այսօր 'ի ձօն արդար :
Լոկ սա զօրէ թոթովել , Տէր ,
ՍԻՐԵՄ ԵՍ ՁԵՁ ԵԱՏ ՏԱՐԻՆԵՐ ,

ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ



ԵՐԿՐՈՐԴ ՈՂՋՈՑՆՔ

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Ա. ՇԱՐ

ՈՐԳԵՆՆ ԵՌ ՀԱՅՐԵՆ

Ա.

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՕՆԻԴ Հայր իմ ,

Հասած սրտով զուարթագին .

Ինչպէս ամեն օր ,

Անանկ ալ այսօր

Կը մաղթեմ առ Տէր իմ միայն ,

Տալ քեզի ԿԵԱՆՔ տեւողական .

Հայր ընդունէ ,

Սրտիս փոքրիկ

Սիրոյն գողտրիկ

Այս սրտկերն է

Զոր քեզ տամ 'ի նուէր ,

Հայր իմ որդեսէր .

Բ.

Ի՞նչ երջանիկ աւուրս ժամեր ,
Որ հօր կենաց ծագեն արեւ .
Ի՞նչ երջանիկ այն զաւակներ ,
Որ պերճ աւուրն անուէն բարեւ :

Ապա որդեակդ , հայր , դայ յատեան ,

Երգել ԱՆՈՒԱՆԸՊ ՏԱՐԵԴԱՐՁ

Արտով զուարթ՝ որդւոյ մ'արժան՝

Հայցել ձեզ շատ արեւադարձ

Գ.

Կայ այսօր թարգման իմ քաղցր զգացմանց ,

Եւ իմ նոր երգիս տալ դաշներ արժան .

Եւ տօնախմբել անուան տարեդարձ ,

Իմ սիրելի հօրս օրն է եւ այս ժամ :

Զ'ուզեմ ես ոչ ոք ելնել 'ի հանդէս ,

Ես սրտիկ մ'ունիմ ուր ուխտերս բուրեն ,

Եւ լեզու մ'ունիմ որ խօսի ներսէս ,

Զ'ուզեմ ինձ թարգման այս աւուրն վսեմ .

Կ'ընդունի հայրս իմ փոքրիկ ձօն ,

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՇՆՈՐՀԱԻՈՐ ՏՕՆ ,

Բ. ՇԱՐ

ՈՐՔԻՆ ԵՒ ԱՌ ՄԱՅՐԵՆ

Ա.

Տեանես իս մայրիկ ,

Որ եմ դեռ փոքրիկ .

Ձը գիտեմ ի՞նչ է անուան տօն ,

Կ'ուզեմ երգել ոստոստելով ,

Եւ ձեզ շնորհել զգացմանցս ձօն ,

Վարդ այտերուս պաշիկներով ,

Մեծ է սէրս մայրիկ ,

Թէեւ ես պղտիկ ,

Ի՞նչ որ երջանիկ

Կ'ընես իս մայրիկ ,

Ուրախ տօնիդ՝ ծաղիկ ժողովեմ ,

Որ մէկ օրուան կեանքն ու իր սէր .

Ես՝ անթրաշամ , գեղ ու վըսեմ

Փուռիկ մ'ունիմ քեզ 'ի նուէր ,

Սրտիկ մը պղտիկ ,

Անմեղ , ո՛վ մայրիկ ,

Բ.

Սիրելի մայր ,

Դեռ մանկութիւնըս չը ներեր՝
Ուրախութիւնս այսօր յայտնել .
Լեզուս դեռ ՏՕՆԻ գովել չգիտէ ,
Բայց սիրտս քեզ սիրել կարէ .

Ընդունէ մայր :

Գ.

Ահա այս այն օրն է ,

Որ լեզուս կը բանայ .

Այս քաղցրիկ այն ժամն է ,

Որ մանկանս սիրտ կուտայ :

Թէպէտեւ անկարող

Հասակով ու մտքով ,

Բայց ո՞վ կայ թարգմանող

Քեզ իմ սէրս , քոյդ գորով :

Խայտամ ահա տոտամբ անզօր ,

Մայր ՏՕՆԻ ԸԼԼԱՅ ՇԸՆՈՐՀԱԻՈՐ .

Չը տեսնես մեր ցաւոց օրեր ,

Ապրիս անվիշտ տարեդարձներ :

Գ. ՇԱՐ

ԱՌ ՊԱԸՏԳԱՆՍ

Ա.

Ո՛վ դու լեզու մանկական ,
Դեռ կը մնաս լռելեայն .
Յէրբ ո՛վ սիրտ իմ տիրասէր ,
Յէրբ անդաշնակ 'ւանտարբեր :
Այս օր , այս ժամ ցնծութեան .
Տաւղիկ քնարիկ ո՛ւր ձեր ձայն ,
Երգել վեհիս ազնուական
Տարեդարձի տօն անուան :
Բարեացապարտ սիրտ , լեզու
Օ՛ն , կարդացէք ալէլու .
Փոքր հասակիս դուք արժան
Պաշտպանիս նուէր դուք միայն :
Դուք երախտեացս իմ նշան ,
Քաղցր զգացմանցրս թարգման .
Օրհնել գովել այն ձեռքեր ,
Որ միշտ խնամեն ձեզ 'ի սէր :

Փչէ զեփիւռ յիս միայն ,
Պատրանստ է ձայնս օրհնութեան .
Եկո՛ւր ու տա՛ր յերկինս վեր ,
Ուր համայնից բազմի Տէր :
Այս են մաղթանքս՝ ինչպէս միշտ ,
Բարերարիս կեանք անվիշտ
Շնորհել դեռ շատ տօներու .
Կեցցէ իմ վեհ խնամածու :

Բ.

Սրտիկս 'ի սէր յուզուած այսօր ,
Ուրախ ոգւով , զուարթ երեսով
Ձեզ կը դիմեմ , ո՛վ բարերար ,
Ձեռացդ համբոյր տալ , երգելով
ՏԱՐԵԴԱՐՁԻԴ ՏՅԵ ՇՆՈՐՀԱԻՈՐ :
Հերիք սեպեմ այսքանն , ո՛վ Տէր ,
Ձեզ , որ սրտիս փառքն էք եւ յոյս .
Ինծի յարմար ժամ մը չ'է այս ,
Ուր յիս փայլի խնամոցդ լոյս ,
Տալ Ձեզի՝ բայց ինչպէս նուէր ,
— Միրտ մը տիրասէր :

Դ. ՇԱՐ

ԵՂԲԱՅՐ ԱՌ ԵՂԲԱՅՐ

Ա.

Քեզ չը սիրեմ ո՞վ սիրեմ .

Դու որ եղբայր , արիւնս ես ,

Օրօրոցիս իմ ընկեր ,

Ի՞նչ երգ կարդամ այսօր քեզ ,

Շնորհաւորել տօնդ վսեմ :

Քեզ կը սիրեմ , եղբայր իմ .

Եւ թէ սիրեմ , արդ այսօր

Հրճուիմ , պարեմ քեզ փարիմ ,

Օ՛ն ձեռք եղբայր , օ՛ն համբոյր ,

Արեւ սրտիս աննսեմ :

Քեզ չը սիրեմ ո՞վ սիրեմ .

Երկինք շնորհեց ինձ այս սէր ,

Առաքինի՛ եւ ազնիւ ,

Ո՛հ , քեզի ի՞նչ տամ նուէր ,

Սիրտ մը եւ Սէր որ քաղցր են :

Քաղցր է ինձ մաղթել ՏԱՐԵՊԱՐՁ ՏՕՆ ՇԱՏ :

Ապրինք անբաժան , եղբայր հարազատ :

Բ.

Մուժ աւապերով ծածկի արեւ ,

Մշուշ տեղայ երկրի վերեւ ,

Փթտի պտուղ թօշնի ծաղիկ ,

Խաղաղ ծովն ալ ունի ալիք :

Բայց իմ սէրս եղբայր ,

Միշտ ջերմ ու փայլուն .

Սրտիկս է արդար ,

Մինչ հանգչիմ 'ի քուն ,

Քեզ կ'երազեմ քեզ .

Ո՛վ վկայ բերեմ ,

Թէ ո՞րչափ քեզ սիրեմ :

Երբ տխրութիւն պատէ ոգիս ,

Քեզ մխիթար տեսնեմ ցաւիս .

Այն ինչ սիրենք իրար եղբայր ,

Ո՞րչափ հրճուին մեր հայրն ու մայր :

Ճոռոռէ սոխակ ,

Սիրոյս է երգակ .

Փչէ սէրուսիրտ ,

Զովանայ իմ սիրտ :

Խայտամ գառան պէս ,

Սէրս առնու ոգի ,

Եւ դիմեմ միշտ ձեզի .

Ինչպէս այսօր անուան տօնիդ ,

Վառած նոյն սէրն եղբօրըդ սիրտ ,

Փռւթայ ջօնի շնորհաբերել ,

Փանք գոհութիւն տալով առ Տէր .

Առ Տէր , ո՛վ եղբայր ,

Որ մեր սիրտն ու սէր

Խնամէ անդադար :

Այսպէս շատ օրեր

Իրար համբուրել ,

Եւ երգել եղբօր սէր ,

Հոն , ուր առած ենք մենք ծընունդ ,

Հոն , ուր այսօր կ'առնունք սընունդ .

Մեր կեանք ու փառք — ծնողաց գորով ,

Եթէ հնազանդ ըլլանք սիրով .

Այս երկնից պատուէր ,

Այս պարտք եւ նուէր

Եղբարց , ո՛վ իմ սէր :

Ե. ՇԱՐ

ԱՌ ՔՈՅԲ

Երբ աչքս յեթեր դարձունեմ,

Թռչնոց խուճբեր կը տեսնեմ .

Մէկտեղ կ'երդեն ու պարեն ,

Սրտիս նախանձ մը կ'ազդեն :

Երբոր նայիմ իմ չորս դիս ,

Չքնաղ ծաղկունք պարտիզիս

Տեսք մ'ինձ ցուցնեն զուարթերես ,

Կը նախանձիմ ճիշդ սրտէս :

Միթէ անոնք քոյր անկեղծ ,

Սիրելի են քան զքեզ .

Այն սէրն քեզի համար ալ՝

Չ'է տուեր ինձի Տէրն արդար :

Այն սէրն չ'է , քոյր սիրական ,

Որով կ'եղնեմ արդ յատեան ,

Սրտիս ուխտով տօնելու ,

ԱՆՈՒԱՆԻՒ ՊԵՐՃ ՏՕՆ յալէլու :

Շատ տարեդարձներ

Քոյր ապրինք 'ի սէր :

Զ. ՇԱՐ

ՄԱՆԿԻԿՆ

ՅՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ

Կաղանդն եկաւ բարիքով ,

Գրպանս լեցաւ նուէրով ,

Շնորհաւոր Օր ըսելով ,

Շուրթս յողնեցաւ համբոյրով ,

Կարծէի թէ կաղանդ օրեր՝

Երբէք արեւ մար չը մտներ :

Ո՛հ , իրիկունն հասաւ շուտ ,

Գրպանս պարապ , փորս անկուշտ .

Գլուխս ծռած պառկեցայ ,

Անոյշ քուն մը քնացայ :

Մէյ մ'ալ տեսնեմ որ նոր արեւ՝

Ծագեր կանուխ գլխիս վերեւ :

Թէ եւ սիրտս կաղանդուան

Փառքէն զուրկ էր , որ անցան .

Օրացոյցին միւս երես

Դարձուցի , ի՞նչ տեսնեմ ես .

ԾՆՈՒՆԴ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՓՐԿՁԻ ,

Երկու օր ալ կայ կիրակի :

Վեր վաղեցի վար իջայ ,

Մինչ այն օրուան ալ հասայ .

Կանուխ ելայ անկողնէս ,

Նոր սէր ծնաւ հոն սրտէս :

Նոր հագուստներս հագուած սգուած ,

Ժամ վաղեցի առ Տէր Աստուած .

Գարձայ 'ի տուն խնդումով ,

Բարեւեցի համբոյրով .

Աւետեցի ԾՆՈՒՆԴ՝ հօր մօր ,

Բարեկամացըս բոլոր :

Եւ սկսայ երգել նոր եղանակներ ,

Որ Հայաստանիս համար են գրուեր :

Ո՛վ հայրենիք իմ վսեմ ,

Քու ծնունդդ երբ պի՛ տեսնեմ ,

Երգեցի , մէյմ՝ ալ ներսէս

Ա՛խ մը փրթաւ՝ ճիշդ սրտէս :

Օրն իրկուն եղաւ , ինծի խրատ եղաւ ,

Թէ միշտ գան օրերն ու կ'անցնին կարգաւ .

Անշուշտ օր մըն ալ վեհ Հայաստանիս

Արեւը փայլի՛ ըսի Դայեկիս :

Է. ՇԱՐ

Ի ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

Ինչպէս սոխակ

Անոյշ լեզուակ

Ծառին վրայ

Կը ճլուղլայ ,

Ես ալ պղտիկ

Զերդ այն թռչնիկ ,

Գնչու լեզուով

Արդ կայտուելով

Կը ճոռուողեմ ,

Որ աւետեմ

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻԻՆ

ՄՏՏՈՒԱԾՈՐՆԻՈՅՆ :

Թրամ թրամ , օր անթառամ .

Բացուէ սրտիկ իմ անուշիկ .

Բերէ զատիկ շուտ գարնայնիկ .


Օ՛ն եղբարք , ձեռք , պար բոլորենք ,

Խաբող Ապրիլ գնահ կորիւր ,

Թող գայ Մայիս իմ սիրելիս .

Ժողվեմ ծաղիկ սիրոյս գողօրիկ .

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Ծ



Մ Ա Ն Կ Ի Կ Ն

ԱՌ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Կայտառ մանուկ մ'եմ հայկազուն ,
Միշտ յուզման մէջ սիրտս ալեաց պէս •
Աչերս կայծիկ աստղիկ փայլուն ,
Լուսաբերն եմ հայ փառաց , Էս :

Կ'ուզեմ դաշտ ու լեռ ,

Թռչիլ վար ու վեր •

Մինչեւ որ հասնիմ ,

Ի գլուխ բլրակին ,

Եւ հոն գեղգեղեմ

Իմ երգըս վսեմ ,

Ուր հայն ունի սէր ՄԻՈՒԹԻՒՆ •

Միշտ իր հեան է ԱԶԱՏՈՒԹԻՒՆ •

Երբոր լեզուակս եղաւ ազատ ,

Եւ մայրս կտրեց բերնէս իր կաթ ,

Արդ , ազատ ես ըսաւ , որդեակ ,

Ե՛լ , ե՛լ գրկէս քայլ առ արձակ :

Սիրտդ վառվըռուն ,

Ոգիդ միշտ արթուն •

Աղաւնւոյ նման
Միշտ անմեղական ,
Զերդ օձ խորամանկ ,
Երգէ վանկ 'ի վանկ ,
Ուր հայն ունի սէր , ՄԻՈՒԹԻԻՆ ,
Միշտ իր հետն է ԱԶՍՏՈՒԹԻԻՆ :

Մօրըս կաթին հետ խմեցի
Ազատութեան անոյշ նեկտար .
Սիրտս ու արիւնս գրաւ դրի ,
Պաշտել երկնից տուած այս բառ .
Ո՞վ կրնայ դէմ գալ
Իրաւանց արդար .
Այս փանք տիրատուր ,
Ապրիմ խուլ ու կոյր .
Ազատ եմ երգել
Դարուս այս հրաւէր ,

Ուր հայն ունի սէր , ՄԻՈՒԹԻԻՆ ,
Միշտ իր հետն է ԱԶՍՏՈՒԹԻԻՆ :

Հայ դիւցազանց ես զաւակն եմ .
Հայրիկս ըսաւ հայն է վսեմ .
Հայն է կտրիճ , հայ ճշմարիտ
Այն , որ նուիրէ հայրենեաց սիրտ :


Ես ինչո՞ւ չըլլամ
Այն հայուն նման ,
Որ ուր որ երթայ ,
Հայ փառքով պանծայ .
Եւ թափառական
Կ'երգէ ամեն ժամ ,

Ուր հայն ունի , Սէր , ՄիՈՒԹԻԻՆ ,
Միշտ իր հետն է ԱԶԱՏՈՒԹԻԻՆ :

Վատ ոգիներ ինձմէ հեռի ,
Որ ձեր խղճին լոյսն է մարած .
Հրածեշտ փղձկէք հայ պարտքերի ,
Չար լեզուների՞ թոյն թաթխած :

Իմս է հայրենիք ,
Իմս Յրէնք ու Գիրք .
Վրէժ , մանկանց Աստուած ,
Կամ լոյս կոյր մտաց .
Մինչ շիրմիս բերան
Իմ երգս է միայն ,

Հայ , թէ յարգես Սէր ՄիՈՒԹԻԻՆ ,
Մոցըդ գտնես ԱԶԱՏՈՒԹԻԻՆ :



ՄԱՆԿԻԿՆԵ

ԱՌ ՍՈՒԱԿ ԳԻՇԵՐՈՅ

Ո՛վ զարդարուն գարնան գիշեր ,
Այս ի՛նչ անոյշ երգ , դայլայլիկ .
Սէրս երգէ թէ լուսին 'ւասողեր ,
Այս բնութեան ո՞ր վե՛հ երգեցիկ .
Արդեօք զուարթո՞ւն մ'է երկնային .
Մահկանացուի դաշնակ չ'է աս .
Հրաւիրանէ է Հայաստանին ,
Ազնիւ ձայնիկ ո՞ւրկէ կուգաս .
Սոխակիս ձայնն է անուշիկ .
Ո՛հ , մխիթար մանկանս սոխակ .
Թշուառութեան ընկեր գողտրիկ ,
Ուրախութեան ճարտար քնարակ .
Ինչո՞ւ այդպէս խիստ հեռուներ՝
Ձեփիւռին դէմ երգերդ ցրուես ,
Կը սիրեն քեզ հայ մանուկներ ,
Ճլլու՞մդ ինչո՞ւ սրտէս բաժնես .
Քնդցր է առուակ քեզ , քնդցր հովիտ ,
Գիշեր ցերեկ ծաղկունքն երգես .
Ո՛հ ծաղիկ է եւ մանկանս սիրտ ,
Երկնանուէր ձայնդ հոն չը ցրուես .

Պղտորեն երգդ գետն ու տերեւ ,
Ո՛վ դու թռչնիկ դաշն իմ սիրոյս ,
Ա՛ռ այս գիշեր մանկանս բարեւ .
Սիրեմ ես քեզ , հէ՛ք սրտիս յոյս :
Հեծէ՛ ոգիս , ա՛խ դայ ներսէս ,
Գեռ միշտ հեռու ձայնդ անուշիկ .
Պատուհանս բաց է եկուր ներս ,
Թռի՛ր պանդուխտ հայուն մօտիկ :
Թո՛ղ պահ մը ձորն , առուակ , լուսին ,
Ահա՛ բացի ծոցըս տաքուկ ,
Թո՛ղ ծառ , ծաղիկ եւ սէր վարդին ,
Թառէ՛ յիմ գիրկ թռչնիկ փափուկ :
Պատրաստ քեզի սերմ ու հատիկ ,
Ոսկի թելով հիւսուած վանդակ .
Ունիմ եւ ես երդ մ' ՆԱՅՐԵՆԻՔ ,
Բայց չ'ունի ձեր քաղցր եղանակ :
Օ՛հ , ձայնդ խառնէ երգիս աւեր ,
Թէեւ մանուկ , սէրս չ'է պզտիկ .
Հայրենիքէս դուրս այդ ճռիչներ ,
Իմ անձկութեանս են ճիշտ ընկեր :
Հայրենիքէ՛ դուրս , ո՛վ սոխակ ,
Այն ինչ տեսնեմ քեզ 'ի դաշտի ,
Հայաստանս քեզ հետ երգել պարտք .

Այս իմ հօր մօր խըրատ բարի ,
Չես մօտենար սոխակ սիրուն .
Ազատ ես , թռիւր , թռիւր գեղ թռչնիկ ,
Լսէ երկինք գիշերս 'ի բուն'
Քո եւ հայ տղիս պարզ դայլայլիկ ,

ՀԱՅ, ՀԱՅՐԵՆԻՔ :

ՔԱՐՆԱՆ ՔԻՇԵՐ

ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅՈՒՆ

Երբ ծաղկուտ դաշտէն հեղ ալեաց նման՝
Քաղցրհամբոյր զեփիւռ գարնան իրիկուան՝
Պարզերես սուրայ պանդխտին հիւղեակ ,
Սրբելու ճակտին քրտանց ջերմ կայլակ ,
Յրուել հէք սրտին հինօրեայ թախիծ ,
Ի՛նչ քաղցր զգացում այն ատեն հայուն ,
Սիրել իր բնիկ հայրենիք սիրուն

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ :

Երբոր ամպածրար սարոց ետեւէն
Ծովահաս լուսնակն ելնէ գալ ման , ճեմ ,
Ինչպէս թիկնապահ զինուոր քաջարթուն՝
Շքեղ պալատին մէջ գիշերն անքուն

Հսկէ 'ի պատիւ արքային վսեմ,
Ի՛նչ քաղցր այն ատեն պանդխտիկ հայուն,
Լուսնոյ դէմ սիրել հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ :

Մինչ գեղջուկ հովիւն երգէ 'ի սրբինգ ,
Արձագանք ձայնին՝ այեր , ձորք ու երկինք .
Հովուական տաղն է օրերն երջանիկ .
Ազատ միշտ յանձկոց հեծել ՀԱՅՐԵՆԻՔ .
Աստղերն յոյս սրտին լուսինն իր պանծանք .
Ի՛նչ քաղցր այն ատեն բաղդազուրկ հայուն
Ողբերգել միայն հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ :

Մինչդեռ վարդի թուփ տաճար սոխակին՝
Յառուակն արագոտ համբոյր տայ լուսնին,
Ծովախաղ նաւակն արծաթէ փրփուր
Թիակաց ծայրէն սրակէ հոյլ 'ի հոյլ ,
Կ'ապրի՞ միթէ հոն անձուկ , վիշտ , կսկիծ .
Ի՛նչ քաղցր այն ատեն չուառիկ հայուն,
Յիշել եւ սիրել , հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ :

Մինչ գիւղեր մանկանց, հաւուց գեղգեղան ք
 Չորերն ալ թռչնոց առուոց արձագանք ,
 Եւ հեղատաղարթ հովտաց յանտառիկ
 Մայեն ու գառնուկն անմեղ ու եղնիկ ,
 Վկայ Աստուծոյ՝ բնութեան արարչին .


Ինչ քաղցր այն ատեն թափառոտ հայուն ,
 Սիրել իր սիրտին հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ .

Հուսնակն երբ 'ի քօղ ամպերով ձերմակ ,
 Պանդուխտ ձեռք 'ի քնար արդէն 'ի հիւղեակ ,
 Շարժէ կնտնտոցն դէմ սէրուսիրտին
 Աչքէն՝ ցօղ յերկիր , սրտէն ձայն յերկին ,
 Մինչ քունն երազոց մէջ զանի շրջէ :

Հոն անգամ քաղցրէ պանդխտիկ հայուն ,
 Յիշել եւ սիրել հայրենիք սիրուն ,

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆՈՒՆ .



ՀԵՂԻՆՍԱԿԻՍ

ՄԻԻՍ ԱՆԻՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՍ
ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ ԵՒ ՀԵԳԱՐԱՆ : Մինչեւ հի-
մայ տպուած քերականներուն մէջ ամենէն
դիւրուսոյց բլլալը՝ շատ մանկավարժներ
վկայուած . 32 երեսով . Հայկազնեան Ըն-
կերութեան արդեամբը տպուած
ԱՐԱՔՍԻԱ : Բանաստեղծութեան փոքրիկ
ճաշակ մը աշխարհաբառ լեզուով ու պարզ
ոճով յօրինուած Վէպ մը . 118 երեսէ բաղ-
կացեալ :

ԶՈՐՍ ՕՐԻՈՐԴ ԿԱՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐԲ ԵՒ
ՈՒՍՈՒՄՆԱՏԵԱՅԲ : Տղայոց սիրտը ուսում-
նասիրութեամբ արծարծելու եւ տղխտու-
թենէ խորչեցնելու համար , Թատերական
ձեւով ներկայացում մը . 36 երեսէ բաղկա-
ցեալ :

Գրքսկիս մէջ հանելուկ մը կայ, զոր ընթերցողաց
հետաքրքրութեանը յանձնելով, լուծողին՝ ամոր ա-
ռաջին բառը նուիրել, պատիւ անձին կը համարիմ :

3703

4508000

2013

